ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

Կ-610-05.06.2023-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական գույքի կառավարման մասին» 2014 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-158-Ն օրենքի՝

1) 6-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 23-րդ կետով.

«23) հաստատում է հանրային իշխանության մարմինների (բացառությամբ տեղական ինքնակառավարման մարինների) և պետական ոչ առևտրային կազմակերպությունների պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկող ավտոմեքենաների հատկացման և շահագործման կարգը, պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը, պետական մարմիններին հատկացվող ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների սահմանաքանակները, ավտոմեքենաների վառելիքի, յուղերի ու քսուքների ծախսի, ավտոդողերի վազքի, կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների նորմաները, պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկելու նպատակով ձեռք բերվող ավտոմեքենաների առանձին չափորոշիչները:».

3) 7-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

4) 7-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 28-րդ կետով.

«28) մշակում է հանրային իշխանության մարմինների (բացառությամբ տեղական ինքնակառավարման մարինների) և պետական ոչ առևտրային կազմակերպությունների պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկող ավտոմեքենաների հատկացման և շահագործման կարգը, պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը, պետական մարմիններին հատկացվող ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների սահմանաքանակները, ավտոմեքենաների վառելիքի, յուղերի ու քսուքների ծախսի, ավտոդողերի վազքի, կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների նորմաները, պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկելու նպատակով ձեռք բերվող ավտոմեքենաների առանձին չափորոշիչները:»:

5) 12-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Պետական հաշվառման ենթակա օբյեկտներ են հանդիսանում սեփականության իրավունքով պետությանը պատկանող շարժական (բացառությամբ դրամական միջոցների) և անշարժ գույքը (բացառությամբ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների), այդ թվում՝ հողամասերը, միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ճանապարհները, արհեստական կառույցները, ճանապարհային կահավորանքն ու ճանապարհային մաս հանդիսացող այլ շինությունները, պետական մարմինների, մարզպետի աշխատակազմի, պետական մարմինների և մարզպետի աշխատակազմի ենթակայության պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպություններին (այսուհետ՝ կազմակերպություններ) ու հիմնադրամներին (այդ թվում՝ որոնց հիմնադրի, ինչպես նաև լիազորված պետական մարմնի լիազորությունները փոխանցվել են Երևանի քաղաքապետին) անհատույց օգտագործման իրավունքով հանձնված անշարժ և շարժական գույքը, ինչպես նաև կազմակերպությունների և հիմնադրամների սեփականության իրավունքով պատկանող անշարժ և շարժական գույքը՝ այդ թվում՝ տրանսպորտային միջոցները, պետական մարմինների հաշվեկշռում հաշվառված մտավոր սեփականության օբյեկտները,

իրավաբանական անձանց (այդ թվում՝ որոնց հիմնադրի, ինչպես նաև լիազորված պետական մարմնի լիազորությունները, որպես պատվիրակված լիազորություն, փոխանցվել են Երևանի քաղաքապետին) կանոնադրական կապիտալում պետական բաժնեմասը (բաժնետոմսերը), այլ պետություններում գտնվող (այդ թվում՝ դիվանագիտական առաքելությունների համար օգտագործվող)՝ Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը:»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում:

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

Կ-610-05.06.2023-ՏՀ-011

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական գույքի կառավարման մասին» 2014 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-158-Ն օրենքի՝

1) 6-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 23-րդ կետով.

«23) հաստատում է հանրային իշխանության մարմինների (բացառությամբ տեղական ինքնակառավարման մարինների) և պետական ոչ առևտրային կազմակերպությունների պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկող ավտոմեքենաների հատկացման և շահագործման կարգը, պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը, ~~առանձին~~ պետական մարմիններին հատկացվող ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների սահմանաքանակները, ավտոմեքենաների վառելիքի, յուղերի ու քսուքների ծախսի, ավտոդողերի վազքի, կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների նորմաները, պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկելու նպատակով ձեռք բերվող ավտոմեքենաների առանձին չափորոշիչները:».

3) 7-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

4) 7-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 28-րդ կետով.

«28) մշակում է հանրային իշխանության մարմինների (բացառությամբ տեղական ինքնակառավարման մարինների) և պետական ոչ առևտրային կազմակերպությունների պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկող ավտոմեքենաների հատկացման և շահագործման կարգը, պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը, ~~առանձին~~ պետական մարմիններին հատկացվող ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների սահմանաքանակները, ավտոմեքենաների վառելիքի, յուղերի ու քսուքների ծախսի, ավտոդողերի վազքի, կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների նորմաները, պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկելու նպատակով ձեռք բերվող ավտոմեքենաների առանձին չափորոշիչները:»:

5) 12-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Պետական ~~էլեկտրոնային~~ հաշվառման ենթակա օբյեկտներ են հանդիսանում սեփականության իրավունքով պետությանը պատկանող շարժական (բացառությամբ դրամական միջոցների) և անշարժ գույքը (բացառությամբ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների), այդ թվում՝ հողամասերը ~~(բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հողամասերի)~~, միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ճանապարհները, արհեստական կառույցները, ճանապարհային կահավորանքն ու ճանապարհային մաս հանդիսացող այլ շինությունները, պետական մարմինների, մարզպետի աշխատակազմի, պետական մարմինների և մարզպետի աշխատակազմի ենթակայության պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպություններին (այսուհետ՝ կազմակերպություններ) ու հիմնադրամներին (այդ թվում՝ որոնց հիմնադրի, ինչպես նաև լիազորված պետական մարմնի լիազորությունները փոխանցվել են Երևանի քաղաքապետին) անհատույց օգտագործման իրավունքով հանձնված անշարժ և շարժական գույքը, ինչպես նաև կազմակերպությունների և հիմնադրամների սեփականության իրավունքով պատկանող անշարժ և շարժական գույքը՝ այդ թվում՝

տրանսպորտային միջոցները, պետական մարմինների հաշվեկշռում հաշվառված մտավոր սեփականության օբյեկտները, իրավաբանական անձանց (այդ թվում՝ որոնց հիմնադրի, ինչպես նաև լիազորված պետական մարմնի լիազորությունները, որպես պատվիրակված լիազորություն, փոխանցվել են Երևանի քաղաքապետին) կանոնադրական կապիտալում պետական բաժնեմասը (բաժնետոմսերը), այլ պետություններում գտնվող (այդ թվում՝ դիվանագիտական առաքելությունների համար օգտագործվող)՝ Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը:»,

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-610-05.06.2023-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագիծ 1-ին հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «(բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված հողամասերի),» բառերը հանել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերում բացառվում են իրավական նորմերի անհիմն կրկնությունները և ներքին հակասությունները: Սույն դեպքում, Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ պետական գույքի հաշվառման գրանցամատյանում հաշվառման ենթակա չէ այն պետական գույքը, որի մասին	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			տեղեկությունները պետական գաղտնիք են: Վերոգրյալից ելնելով՝ գտնում ենք, որ Նախագիծ 1-ին հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում Օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հողամասերի համար բացառություն նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է:		
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետ Նախագծի 1-ին հոդվածի 4-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ և 4-րդ կետերում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր 23-րդ կետում և 7-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր 28-րդ կետում սահմանված «առանձին մարմիններ» իրավադրույթը վերանայել իրավական որոշակիության տեսանկյունից եւ Նախագծում կիրառել նորմատիվ իրավական ակտերով սահմանված հասկացություններ, որպեսզի հասցեատեր սուբյեկտները կարողանան դրսեւորել համապատասխան վարքագիծ: Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք «առանձին մարմիններ» բառերը փոխարինել «պետական մարմիններ» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 5-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածի 5-րդ կետում Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը նոր խմբագրությամբ շարադրելիս, «պետական» բառից հետո հանել «էկեկտրոնային» բառը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			Փոփոխությունը կատարվել է պետական գույքի հաշվառման ենթակա օբյեկտները՝ պետական էլեկտրոնային հաշվառման ենթակա օբյեկտներից չառանձնացնելու նպատակով:		
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «ենթաօրենսդրական իրավական» բառերը փոխարինել «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում սահմանված հասկացությունը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է: